ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու հերթական նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ծաղկաբեր	Ավագանու հերթական նիստ	15.04.2020թ.	10:00	**Ծաղկաբերի** համայնքապետարան (գ.Ծաղկաբեր,2 փողոց, 12 շենք)

Նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.
ԱՊՐԻԼԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 15-ի հերթական նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ծաղկաբեր համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2020թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին

Զեկ. Հ. Հովհաննիսյան

2. Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին:

Զեկ. Հ. Հովհաննիսյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ. Հ. Հովհաննիսյան

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել Ծաղկաբեր համայնքի ղեկավարի համայնքի 2020թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և « ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի բյուջեի 05.02.01.55 տնտ. դասակարգումում գումարային փոփոխություն կատարել, չխախտելով նախահաշիվների ընդհանուր թվերը
2. 05.02.01.55 տնտ.դասակարգման 5112 հոդվածից 160.0 հազ. դրամ տեղափոխել նույն տնտ.դասակարգման 5134 հոդվածին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 15--ի N 13-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Վիրաբյան Արամայիս Ֆելիքսի---------20000 /քսան հազար դրամ/ սոց.օգնություն/
2. Ամիրբեկյան Սոֆյա Սարիբեկի----------20000/քսան հազար դրամ/սոց.օգնություն

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ: